ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ԱՃԻ ՎՐԱ

ԱՐՓԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն, մանկավարժության ամբիոն,
կրթության կառավարում, մագիստրանտ
arpinehakobyan52@gmail.com

DOI: 10.54503/978-9939-1-2075-1-212

Համառոտագիր

Կրթության որակի բարձրացումը կարևոր տեղ է զբաղեցնում կրթության տիրույթում, իսկ օտար լեզուների, մասնավորապես գերմաներենի ուսուցումը կարևոր բաղադրիչ է՝ ի պատասխան ժամանակակից հասարակության գլոբալ պահանջներին: Գերմաներենը եվրոպական մի շարք երկրների պաշտոնական լեզուն է, և այդ լեզվին տիրապետելը մեծ թվով ակադեմիական ու մասնագիտական հնարավորություններ է բացում: Սույն հոդվածում ներկայացված է կրթության կառավարման դերը որպես գերմաներենի ուսուցման գործընթացի նկատմամբ ուսանողների հետաքրքրության խթանման միջոց:

Հետազոտության նպատակն է՝ վերլուծել, թե ինչպես կարող է կրթության արդյունավետ կառավարման գործընթացը նպաստել ուսանողների օտար լեզվի ուսուցման նկատմամբ հետաքրքրության աճին: Հոդվածում քննարկվում են կրթության կառավարման տարբեր գործոններ: Էական նշանակություն ունեն այնպիսի գործոնները, ինչպիսիք են՝ ուսումնական միջավայրի ձևավորումը, ուսուցիչների պատրաստվածության մակարդակը, դասավանդման նորարարական մեթոդների կիրառումը և ուսանողներին ներգրավելու ռազմավարությունները: Արդիական է ուսումնասիրել այն գործոնները, որոնք նպաստում են գերմաներեն լեզվի ուսուցման նկատմամբ մոտիվացիայի ստեղծմանը, մասնավորապես՝ կրթության կառավարման մեխանիզմների միջոցով:

Հոդվածում հիմնավորված է, որ կրթության կառավարման արդյունավետ ռազմավարությունները կարող են նպաստել կրթության որակի բարձրացմանը և ուսանողների մոտիվացմանը: Հիմնավորման համար օգտագործվում են մի շարք տեսական և գործնական ուսումնասիրություններ՝ ընդգրկելով ինչպես միջազգային փորձը, այնպես էլ մեր հանրապետության ուսումնական հաստատություններում կիրառվող մոտեցումները:

Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ կրթության կառավարման ռազմավարական մոտեցումը կարևոր ազդեցություն ունի ուսուցման արդյունավետության վրա՝ նպաստելով ուսանողների մոտիվացիայի բարձրացմանն ու գերմաներեն լեզվի ուսումնասիրման նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորմանը:

Հետազոտության մեթոդներ՝ գիտական գրականության վերլուծության,

ուսումնական հաստատությունների կրթական գործունեության լավագույն փորձի ուսումնասիրություն:

Հետազոտության մեթոդական հիմքեր՝ համակարգային, վիճակագրական, տեղեկատվական-ճանաչողական մոտեցումներ:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ կառավարման ռազմավարություններ, գերմաներենի ուսուցում, մոտիվացիա, կրթության կառավարում, կրթության որակի բարելավում:

THE IMPACT OF EDUCATIONAL MANAGEMENT ON THE GROWTH OF INTEREST IN LEARNING GERMAN

ARPINE HAKOBYAN

International Scientific-Educational Center of the National Academy of Sciences of the RA Department of Pedagogy, Educational Management, Master's degree student

arpinehakobyan52@gmail.com

Abstract

Improving the quality of education is a high priority on the global agenda, and teaching foreign languages, especially German, is a crucial component in responding to the demands of modern society. German is the primary official language of several European countries, and mastering it opens up a wide range of academic and professional opportunities. This research examines the role of educational management in increasing interest in learning the German language.

The research aims to analyse how effective educational management practices can stimulate students' motivation and interest in learning a foreign language. The research examines various aspects of educational management, including the design of the learning environment, the level of teacher training, the adoption of innovative teaching methods, and strategies for engaging students. It is relevant to study the factors that contribute to the formation of motivation for learning the German language, in particular through educational management mechanisms.

The research substantiates that effective educational management strategies can enhance the quality of the educational process and foster student motivation. Several theoretical and practical studies are employed to substantiate the findings, encompassing both international experiences and approaches utilised in local educational institutions.

The research results indicate that a strategic approach to educational management significantly impacts learning effectiveness, contributing to increased student motivation and a positive attitude towards learning the German language.

Research methods. Analysis of scientific literature, methods of quality measurement and assessment, and expert evaluation, as well as study of best practices in educational activities of educational institutions. Methodological foundations of

the study. Systemic, statistical, information–cognitive approaches.

Keywords and phrases: Management strategies, German language learning, motivation, educational management, improving the quality of education, international experience, effective management models.

ВЛИЯНИЕ УПРАВЛЕНИЯ ОБРАЗОВАНИЕМ НА РОСТ ИНТЕРЕСА К ИЗУЧЕНИЮ НЕМЕЦКОГО ЯЗЫКА

АРПИНЕ АКОПЯН

Магистрант кафедры педагогики по управлению образованием
Международного научно–образовательного центра
Национальной академии наук Республики Армения
arpinehakobyan52@gmail.com

Аннотация

Повышение качества образования занимает важное место в глобальной повестке дня, а изучение иностранных языков, в частности немецкого, является важным компонентом реагирования на глобальные запросы профессиональных возможностей современного общества. В статье рассматривается роль управления образованием в повышении интереса к изучению немецкого языка.

Цель исследования – проанализировать, как эффективные практики управления образованием могут способствовать повышению мотивации и интереса студентов к изучению иностранного языка. В статье рассматриваются различные факторы управления образованием, такие как проектирование учебной среды, уровень подготовки преподавателей, использование инновационных методов обучения и стратегии вовлечения студентов. Настало время изучить факторы, способствующие формированию мотивации к изучению немецкого языка, в частности через механизмы управления образованием. В статье утверждается, что эффективные стратегии управления образованием могут способствовать повышению качества образовательного процесса и формированию мотивации студентов.

Результаты исследования показывают, что стратегический подход к управлению образованием оказывает важное влияние на эффективность обучения, способствуя повышению мотивации студентов и формированию положительного отношения к изучению немецкого языка.

Методы исследования: анализ научной литературы, методов измерения и оценки качества и экспертной оценки, изучение лучших практик образовательной деятельности образовательных учреждений. Методологические основы исследования: системный, статистический, информационно–когнитивный подходы.

Ключевые слова: стратегии управления, изучение немецкого языка, мотивация, менеджмент образования, повышение качества образования, международный опыт, эффективные модели управления.

Ներածություն

Կրթության կառավարումը ուսումնական հաստատությունների գործունեության հետ կապված ուսումնասիրության և պրակտիկայի ոլորտ է **[1]**: Չկա ընդհանուր առմամբ ընդունված սահմանում, քանի որ դրա զարգացումը մեծապես հիմնված է մի քանի ավելի ամուր գիտակարգերի վրա, ներառյալ սոցիոլոգիան, քաղաքագիտությունը, տնտեսագիտությունը և ընդհանուր կառավարումը:

Կրթության կառավարումը նաև սահմանվում է որպես «գործադիր գործառույթ՝ համաձայնեցված քաղաքականության իրականացման համար»: Այն տարբերակվում է կրթության ղեկավարումից, որն իր առանցքում ունի քաղաքականության ձևավորում և, անհրաժեշտության դեպքում, կազմակերպչական վերափոխում **[2]**:

Կրթության կառավարման մոդելները, ինչպես և դրա տեսությունները, մշակվել են մի շարք գիտնականների կողմից՝ կրթության ղեկավարումը հեշտացնելու նպատակով:

Հարկ է նշել Բուշի ներդրումը, ով ուսումնասիրել է բազմաթիվ գիտնականների աշխատություններ և շատ մանրակրկիտ համակադրել ու զարգացրել դրանք **[3]**: Նա այդ մոդելները համեմատել է ղեկավարման տարբեր ոճերի հետ: Այդուամենայնիվ, մենք մեր ուսումնասիրությունը կենտրոնացրել ենք միայն մոդելների վրա, որոնք հանդիսանում են կրթության կառավարման մասնագիտացման ոլորտի հիմքերը: Ֆորմալ մոդելները ներառում են մի շարք նմանատիպ, բայց ոչ նույնական մոտեցումներ, որոնք ընդգծում են կազմակերպությունների պաշտոնական և կառուցվածքային տարրերը: Ստորև նշված են Բուշի կողմից առանձնացված մոդելների հիմնական առանձնահատկությունները.

1. Ֆորմալ մոդելներում կազմակերպությունները դիտարկվում են որպես համակարգեր: Համակարգը ներառում է տարրեր, որոնք փոխկապակցված են միմյանց հետ: Դպրոցներում բաժինները և այլ ստորաբաժանումներ փոխկապակցված են միմյանց և բուն հաստատության հետ **[3]:** Հետևաբար, դպրոցը որպես համակարգ պետք է դիտարկվի որպես մի ամբողջություն, որտեղ յուրաքանչյուր տարր կարևոր է և անկասկած ազդում է մյուսների վրա: Կարելի է եզրակացնել, որ ֆորմալ մոդելը ուշադրություն է դարձնում կազմակերպության տարբեր մասերի միջև փոխգործակցության և ներդաշնակության կարիքին՝ նպաստելով կազմակերպության ամբողջական աշխատանքի ու նպատակի իրագործմանը:

2. Ֆորմալ մոդելները կարևորություն են տալիս կազմակերպության պաշտոնական կառուցվածքին: Պաշտոնական կառույցները հաճախ ներկայացված են կազմակերպչական գծապատկերներով, որոնք ցույց են տալիս հաստատության անդամների միջև փոխհարաբերությունների լիազորված օրինակը **[3]**: Ֆորմալ մոդելներում կազմակերպության պաշտոնական կառուցվածքի կարևորությունը առնչվում է այն փաստին, որ կազմակերպության անդամների միջեւ փոխհարաբերությունները ու նրանց միջև զբաղեցրած պաշտոնները պետք է լինեն հստակ ու կանոնակարգված:

Պաշտոնական կառուցվածքն ունի ճիշտ կազմակերպված և արտահայտված իրավասություններ, պարտականություններ և պատասխանատվություններ, ինչը օգնում է խուսափել քաոսից կազմակերպության ներսում: Պետք է նշել, որ երբ պաշտոնական կառույցը ճիշտ է կառուցված, այն նպաստում է աշխատողների արդյունավետ աշխատանքի և կազմակերպության նպատակների իրագործմանը՝ ապահովելով հստակության ու կարգի առկայություն:

3. Ֆորմալ մոդելներում կա հիերարխիա, որը ղեկավարների համար իրենց անձնակազմի նկատմամբ վերահսկողության միջոց է: Ուսումնական կազմակերպություններում ուսուցիչները հաշվետու են իրենց ղեկավարներին/տնօրեններին **[3]**: Կարելի է ենթադրել, որ ֆորմալ մոդելներում հիերարխիան արդյունավետ միջոց է կազմակերպության գործունեության վերահսկողության համար, քանի որ այն ապահովում է հստակ դերակատարություններ և պատասխանատվություն յուրաքանչյուր անդամի համար:

4. Բոլոր պաշտոնական մոտեցումները դպրոցներին բնորոշում են որպես նպատակ փնտրող կազմակերպություններ: Ենթադրվում է, որ հաստատությունն ունի պաշտոնական նպատակներ, որոնք ընդունվում և հետապնդվում են կազմակերպության անդամների կողմից **[3]**:

Այսպիսով՝ հարկ է նշել, որ կրթության կառավարումը էական դեր է խաղում կրթության որակի ապահովման գործում: Կրթության կառավարումը նաև մեծ կարևորություն ունի լեզուների ուսուցման, մասնավորապես գերմաներենի ուսուցման որակի ապահովման մեջ, քանի որ կրթական ծրագրերի կառավարման արդյունավետությունը և ուսուցիչների պատրաստվածությունը ուղղակիորեն ազդում են ուսանողների լեզվական գիտելիքների և բառապաշարի զարգացման վրա: Գերմաներենի լավ տիրապետումը կախված է ուսումնական ռեսուրսների առկայությունից, ինչպիսիք են ուսուցման միջոցները՝ ըստ ուսանողների հմտությունների և կարիքների **[4]**:

Կարելի է նշել մի քանի առավելություն, թե ինչու է գերմաներեն սովորելը կարևոր.

1. Գերմաներենը դարձել է տարածաշրջանային լեզու Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում: Քանի որ միջմշակութային հմտություններն այսօր հաջողակ բիզնեսի հիմնական երաշխավորն են, գերմաներենի իմացությունն օգնում է բացել նոր շուկաներ և հաջողակ լինել համաշխարհային բիզնեսում ու միջազգային աշխատաշուկայում:

2. Գերմաներենի դիրքը ամուր է լեզվաբանության և գրականության մեջ: Որպես գիտելիքի և տեխնոլոգիայի լեզու, գերմաներենը կարևոր դեր է խաղում հետազոտության և կրթության մեջ:

3. Որպես մշակութային լեզու, գերմաներենը կարող է բացել ուսանողների ինտելեկտուալ ընկալումները **[5]**: Գերմանական մշակույթը դրսևորվում է տարբեր ձևերով՝ գրականությունից, երաժշտությունից, թատրոնից և կինոյից մինչև ճարտարապետություն, գեղանկարչություն, փիլիսոփայություն և արվեստ: Գերմաներենի իմացությունը թույլ է տալիս ծանոթանալ եվրոպական բազմաթիվ մեծ մշակույթներից մեկին:

Կրթության կառավարման ճիշտ մոտեցումները կարող են մեծապես ազդել ուսանողների մոտիվացիայի վրա՝ հատկապես օտար լեզուների, մասնավորապես՝ գերմաներենի ուսուցման պարագայում: Ահա մի քանի առաջարկ, թե ինչպես կարող է կրթության կառավարումը նպաստել ուսանողների հետաքրքրվածության աճին և մոտիվացիայի բարձրացմանը.

1. Կիրառական ուսուցման ներդրում – Կրթության կառավարումը պետք է ապահովի, որ ուսումնական ծրագրերը լինեն ոչ միայն տեսական, այլև կիրառական: Օրինակ՝ գերմաներենի ուսուցումը կարող է ներառել իրական կյանքում կիրառելի նախագծեր, իրական դեպքերի ուսումնասիրություն: Կիրառական ուսուցման ներդրումը կրթության կառավարման կարևորագույն գործառույթներից է, քանի որ այն ապահովում է, որ ուսանողները ոչ միայն տեսական գիտելիքներ ձեռք բերեն, այլև կարողանան դրանք կիրառել գործնականում: Հատկապես օտար լեզուների, մասնավորապես՝ գերմաներենի ուսուցման դեպքում, կիրառական մեթոդները կարող են զգալիորեն բարձրացնել սովորողների մոտիվացիան և արդյունավետությունը: Օրինակ՝ նախագծային ուսուցման միջոցով ուսանողները կարող են ստեղծել գերմաներենով բլոգեր, պատրաստել տեսանյութեր կամ իրա–կանացնել հարցազրույցներ գերմանախոսների հետ: Իրական դեպքերի ուսումնասիրությունը կարող է ներառել գերմաներեն լեզվով փաստաթղթերի, հոդվածների և օրենսդրական ակտերի վերլուծություն, որոնք սովորողները կարող են հանդիպել առօրյայում կամ մասնագիտական կյանքում: Բացի այդ՝ կիրառական ուսուցման համար իմերսիոն մեթոդները նույնպես կարևոր են: Օրինակ՝ ուսանողները կարող են մասնակցել լեզվական ակումբների, քննարկել տարբեր թեմաներ գերմաներենով կամ աշխատել համատեղ նախագծերի վրա, որոնք պահանջում են լեզվի ակտիվ օգտագործում: Այս ամենը նպաստում է լեզվական միջավայրի ստեղծմանը և ուսանողների լեզվական /գրավոր և բանավոր հմտությունների զարգացմանը, ուստի կրթության կառավարումը պետք է խրախուսի և ապահովի այնպիսի մեթոդներ, որոնք կօգնեն ուսանողներին ոչ միայն տեսական գիտելիքներ ձեռք բերել, այլև դրանք կիրառել իրական կյանքում՝ բարձրացնելով նրանց լեզվական կարողություններն ու հետաքրքրվածությունը:

2. Բազմազան մեթոդների կիրառում – Հնարավոր է համատեղել ավանդական և ժամանակակից մեթոդները, օրինակ՝ քերականության դասերը լրացնել ինտերակտիվ և ավանդական մեթոդների միջոցով: Օրինակ՝ քերականության դասերը, որոնք սովորաբար ընկալվում են որպես բարդ և միապաղաղ, կարող են ներկայացվել խաղային մեթոդների միջոցով, ինչպիսիք են՝ ինտերակտիվ վարժությունները, լեզվական խաղերը և մրցույթները: Օրինակ՝ ուսանողները կարող են լուծել քերականական խնդիրներ վիրտուալ միջավայրում կամ մասնակցել թիմային խաղերի, որտեղ պետք է ճիշտ կիրառեն քերականական կանոնները: Ժամանակակից մեթոդների կիրառումը կարող է ներառել արհեստական բանականության (AI) գործիքներ, օրինակ՝ լեզվական մոդելների և խոսքի ճանաչման համակարգերի օգտագործում՝ հնչյունաբանությունը և արտասանությունը բարելավելու համար: Այս մեթոդը

հատկապես օգտակար է նրանց համար, ովքեր նախընտրում են ինքնուրույն սովորել: Բացի այդ՝ ավանդական մեթոդների համադրումը ինտերակտիվ մեթոդների հետ կարող է բարձրացնել դասընթացների արդյունավետությունը: Օրինակ՝ դասախոսները կարող են օգտագործել վիրտուալ տախտակներ, ուսուցողական հոլովակներ և վիրտուալ իրականության (VR) գործիքներ, որոնք կօգնեն ուսանողներին ընկղմվել լեզվական միջավայրի մեջ: Կրթության կառավարման գլխավոր նպատակներից մեկը պետք է լինի այս մեթոդների ներդրումը, որոնք կօգնեն ուսանողներին ոչ միայն ավելի արդյունավետ սովորել, այլև ավելի մեծ հետաքրքրություն ցուցաբերել լեզվի ուսուցման նկատմամբ:

3. Երկակի լեզվի կրթություն – Երկակի լեզվի կրթությունը երկլեզու և միջմշակութային ծրագրի երկարաժամկետ մոդել է, որը օգտագործում է երկու լեզու՝ բովանդակություն, ուսուցում և հաղորդակցություն դասավանդելու համար, որտեղ ուսանողները կամ աշակերտները զարգացնում են երկլեզու, երկգրագետ, ակադեմիական և միջմշակութային իմացության բարձր մակարդակ **[8]:** Այս մոտեցումը կստեղծի ոչ միայն լեզվաբառարանային, այլև մշակութային կշիռ ունեցող կրթական միջավայր, որտեղ ուսանողները կկարողանան ավելի լավ ինտեգրվել միջազգային շուկա և զարգացնել միջմշակութային հաղորդակցության հմտություններ:

Կրթության կառավարումը կարևոր ազդեցություն ունի ուսանողների մոտիվացիայի վրա, հատկապես օտար լեզուների ուսուցման դեպքում: Գերմաներենի ուսուցումը կարող է դառնալ ավելի արդյունավետ, եթե կրթության կառավարման ճիշտ մեխանիզմներ կիրառվեն:

Մոտիվացիան այն է, ինչը կենտրոնացնում է մեր գործողությունները: Դա ներքին վիճակ է, որը կարելի է համարել որպես մեր «գործելու պատճառ»: Կարիքները, մտքերը և զգացմունքները նպաստում են մեր մոտիվացիայի առաջացմանը: 1900-ականների կեսերից հետազոտողները և մանկավարժները մշակել են ապացույցների լայն բազա, որը կապում է սովորող անհատների մոտիվացիան մի շարք դրական արդյունքների հետ, ներառյալ առաջադրանքները կատարելու կարողությունը, ակադեմիական կատարողականի բարձրացումը, ստեղծագործականությունը և հուզական բարեկեցությունը **[6]:**

Ուսումնասիրությունները ցույց են տալիս այն գործոնների համա-կարգվածությունը, որոնք կարող են ազդել ուսման մոտիվացիայի վրա: Դասավանդման գործընթացի կազմակերպումը կարևոր դեր է խաղում, բայց կարևոր են նաև դրա բնութագրերը՝ դասավանդման գործընթացի պլանավորման գործընթացը, խմբային ներգործության ձևերը, ուսուցման որակը, ուսուցման մոդելի միջոցով ուսուցման ներկայացումը և տեղեկատ-վական տեխնոլոգիաների օգտագործումը դասավանդման գործընթացում **[7]**:

Օգտագործված գրականության ցանկ

1. Bush T., Theories of Educational Leadership and Management, 4th Edition, 2011
2. Bolam R., Educational administration, leadership and management: towards a research agenda, in Bush T., Bell L., Bolam R., Glatter R. and Ribbins P. (eds), Educational Management: Redefining Theory, Policy and Practice, London, Paul Chapman Publishing., 1999
3. Bush T., Theories of Educational Management (3rd edn.). London: Sage, 2003
4. Mattissek A. and. Glasze G, "Discourse analysis in German–language human geography: integrating theory and method," Soc. Cult. Geogr., vol. 17, no. 1, pp. 39–51, 2016.
5. Gasperschitz B, "Was ist los in Hauptstraße 117?" vol. 1, pp. 1–20, 2007.
6. White McNulty, L., Patrikakou, E., N., Weissberg, R., P., Fostering children's motivation to learn, LSS Partnerships, A guide for teachers, 2005, No. 114
7. Schunk D. H., Pintrich, P. R., & Meece, J. L., Motivation in education: Theory, research, and applications (4th ed.). New Jersey: Pearson Education Inc., 2013
8. Soltero S., Dual language education: program design and implementation, Heinemann Portsmouth. NH, 2016